

ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Շիրակամուտ համայնքի ավագանու հերթական նիստի վերաբերյալ

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Շիրակամուտ	Ավագանու հերթական նիստ	08.06.2020թ.	15:00	Շիրակամուտի համայնքապետարանում (գ.Շիրակամուտ, Հայկական փողոց,2ենք 2)

ՕՐԱԿԱՐԳ

2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-ԻՆ ԺԱՄԸ՝ 15:00-ԻՆ ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

1. Շիրակամուտ համայնքի ավագանու 2020թ. հունիսի 8-ի հերթական նիստի
օրակարգը հաստատելու մասին:

/Զեկ.Ա.Երանոսյան/

2. ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը
աճուրդով օտարելուն համաձայնություն տալու մասին

/Զեկ.Ա.Երանոսյան/

3. Ա.Գրիգորյանին սոցիալական օգնություն հատկացնելու մասին

/Զեկ.Ա.Երանոսյան/

ՆԱԽԱԳԻԾ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020թ.

ՀՈՒՆԻՍԻ 8-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.Ա.Երանոսյան/

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին” ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Շիրակամուտ համայնքի ավագանու 2020թ. հունիսի 8-ի հերթական նիստի օրակարգը

Օրակարգ

- 1.ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդով օտարելուն համաձայնություն տալու մասին:
- 2.Ա.Գրիգորյանին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

ՆԱԽԱԳԻԾ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱ-
ՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐՈՎ
ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.Ա.Երանոսյան/

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ հոդվածի 1-ին կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. 286-Ն որոշմամբ հաստատված կարգով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի սեփականություն հանդիսացող հետևյալ հողամասերը աճուրդ վաճառքով օտարելու.

1) Գյուղատնտեսական նշանակության ,4-րդ կարգի արոտավայր 06-087-0108-0001 ծածկագրով , 0,35411 հա մակերեսով հողամասը/մեկ լոտով/, մեկնարկային գինը ` 212400 ՀՀ դրամ, մասնակցության վճարը` 2000 ՀՀ դրամ, նախավճարը ` մեկնարկային գնի 5%-ի չափով, աճուրդի քայլի չափը 5000 ՀՀ դրամ:

2) Գյուղատնտեսական նշանակության ,4-րդ կարգի արոտավայր 06-087-0110-0010 ծածկագրով , 0,304 հա մակերեսով հողամասը/մեկ լոտով/ , մեկնարկային գինը ` 182400 ՀՀ դրամ, մասնակցության վճարը` 2000 ՀՀ դրամ, նախավճարը ` մեկնարկային գնի 5%-ի չափով, աճուրդի քայլի չափը 5000 ՀՀ դրամ:

3) 06-087-0101-0001 ծածկագրով , 0,26996 հա մակերեսով հողամասը /մեկ լոտով/, մեկնարկային գինը ` 269900 ՀՀ դրամ, մասնակցության վճարը` 2000 ՀՀ դրամ, նախավճարը ` մեկնարկային գնի 5%-ի չափով, աճուրդի քայլի չափը 5000 ՀՀ դրամ:

2. Հողամասերի նկատմամբ սահմանափակումներ չկան:

ՆԱԽԱԳԻԾ
Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա.Երանոսյան/

Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու **2017 թվականի** հուլիսի 17-ի, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին թիվ 16-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով Անահիտ Խաչիկի Գրիգորյանի դիմումը և համայնքի գոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել Շիրակամուտ համայնքի բնակիչ Անահիտ Խաչիկի Գրիգորյանի դիմումը և համայնքի բյուջեի 4729 հոդվածից նրան հատկացնել սոցիալական օգնություն՝ 30000/երեսուն հազար/ դրամի չափով.
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո **10-օրյա** ժամկետում հատկացված գումարը տրամադրել **բնակչ**ին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից: